ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. նոյեմբերի 25-ից 29-ը Քիշնև (Մոլդովայի Հանրապետություն)՝ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Վարդան Մելիքյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Վարդան Մելիքյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Քիշնև (Մոլդովայի Հանրապետություն)

   2019թ. նոյեմբերի 25-ից 29-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (UNDP):

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ «Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմում Հայաստանում անտառային հրդեհների կառավարման կարողությունների զարգացման միջոցով» ծրագրի շրջանակներում որոշում կայացնողների համար կազմակերպված ուսումնական այցին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

Այցի նպատակն էր ուսումնասիրել Մոլդովայի փորձը երկրում կենսազանգվածի աղբյուրներից, ներառյալ գյուղատնտեսական թափոններից, ապահով, մրցունակ և կայուն էներգիայի արտադրման գործում:

Մոլդովայի Հանրապետության փորձը գալիս է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող երկփուլ «Մոլդովայի էներգիա և կենսազանգված» ծրագրից, որը ՄԱԶԾ-ի կողմից իրականացվել է 2011-2018թթ.: Ծրագիրը զգալի նվաճումներ է գրանցել կենսազանգվածի վրա հիմնված կայուն էներգիայի արդյունաբերությունում:

ԵՄ կողմից ֆինանսավորվող Մոլդովայի էներգետիկայի և կենսազանգվածի նախագիծը, որն իրականացվել է ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) կողմից, նպատակ ուներ նպաստել Մոլդովայի Հանրապետությունում ավելի անվտանգ, մրցակցային և կայուն էներգիայի արտադրությանը կենսազանգվածի աղբյուրներից: Նախագծի իրականացումը նպաստել է կենսազանգվածի աղբյուրներից էներգիայի

առավել արդյունավետ օգտագործմանը՝ դրանով իսկ նպաստելով ինչպես ավելի անվտանգ, մրցունակ և կայուն էներգիայի արտադրությանը, այնպես էլ տեղական զարգացմանը: Թիրախային համայնքների կողմից ստեղծվել են իրենց էներգիայի աղբյուրները, ինչը հանգեցրել է նոր բիզնեսների և աշխատատեղերի ստեղծմանը:

Այցի հիմնական նպատակն էր ուսումնասիրել «Մոլդովայի էներգիա և կենսազանգված» ծրագրի արդյունքները, որոնք հետևյալն են.

- բարելավել ջեռուցման հարմարավետության մակարդակը գյուղական համայնքներում և փոքր քաղաքներում գտնվող հասարակական շենքերում՝ օգտագործելով Մոլդովայում կենսազանգվածից արտադրվող մատչելի էներգիան,
- աջակցել երկրում կենսազանգվածի շուկայի հետագա համախմբմանը՝ հիմք ընդունելով փորձն ու գիտելիքները,
- բարձրացնել ազգային կարողությունները կենսաէներգետիկ ոլորտում՝ ապահովելով կայունություն և հետագա վերարտադրություն և այլն:

Ուսումնական այցի շրջանակներում հանդիպում եղավ Մոլդովայի ՄԱԿ-ի զարգացման ծրագրի ներկայացուցիչների հետ:

Աշխատանքային հանդիպման շրջանակներում մանրամասնորեն ներկայացվեց «Մոլդովայի էներգիա և կենսազանգված» ծրագիրը: Մոլդովայի էկոնոմիկայի նախարարության և Էներգիայի արդյունավետության գործակալության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկվել են ծրագրի արդյունքները, խնդիրները և հնարավորությունները՝ հետագա զարգացման համար:

Հանդիպման երկրորդ օրն այցելեցինք Լեովա քաղաք, որտեղ մարզային խորհուրդը ներկայացրեց պետական-մասնավոր գործընկերության մոդելը (PPP Model):

Այցելություն եղավ նաև Լեովա քաղաքում գտնվող ծղոտի արտադրամաս:

Հանդիպման շրջանակներում կազմակերպվել են այցելություններ մի շարք նախակրթական և կրթական հաստատություններ, որտեղ համապատասխան ջեռուցման համակարգեր են տեղադրվել:

Այցելեցինք նաև բրիկետավորման արտադրամաս, որը գտնվում է Բելցի քաղաքում, ինչպես նաև բույսերի գենետիկայի և ֆիզիոլոգիայի ինստիտուտ:

Հանդիպման շրջանակներում հնարավորություն ընձեռվեց տեղեկանալու վերոնշյալ նախագծի արդյունքներին, դրական ազդեցությանը և զարգացմանը, ինչպես նաև իրականացնել փորձի փոխանակում՝ այցելելով մի շարք արտադրամասեր:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

12/4/2019

X

ՎԱՐԴԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

Signed by: MELIKYAN VARDAN 1901820505

Վարդան Մելիքյան